

ՄԽԻԹԱՐ ԱԲԲԱՀԱՅՐ

Ե Ի

ԽԱԶԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏ

«Թանկագին, աստուածային է բարեկամութիւնը եւ մեծ հոգիի մը ապահով նշանը եւ առաքինութեան կապուած ամենաբարձր տեսանկի վարձատրութիւնը», կ'ըսէ Լազարուսեր (S.te Marie Madeleine, Œuvre, t. II, pg. 363):

Մխիթար Սեբաստացի չքնաղ առաքինութիւններով զարդարուած մեծ հոգի մըն էր, որ իրեն կը յանկուցանէր բազմաթիւ սրտեր բարեկամութեան զօղերով: Սակայն անոնց մէջ անդուգական տեղ մը կը գրաւէ Սաղաթուքի Վ. Առաքելեան, որուն մասին կը գրէ Հ. Յովհ. Վ. Թորոսեան, «Յղաւ ան ստոյգ եւ անկեղծ բարեկամ մը, հիացող եւ պաշտող մը Մխիթարայ, փոխադարձաբար Մխիթար եւս նոյն սէրը, հիացումը եւ յարգանքը ունէր առ Սաղաթուքի Վարդապետ: Անոնց այդ սուրբ եւ քրիստոնէական բարեկամութեան ուրիշ օրինակ չեմ գտներ, բայց Ս. Բարսղի եւ Ս. Գրիգորի Նաղիանդացւոյն մէջ եղած բարեկամական կապը, յորում Մխիթար, իր եռանդուն բնաւորութեամբ գործնականը միացուցած հայեցողական կենաց հետ, եւ իբր հիմնադիր միաբանական կենաց, աւելի Ս. Բարսղի կը մօտենայ, ինչպէս նաեւ Սաղաթուքի Վարդապետ Նաղիանդացւոյն, իր մեղմ բնաւորութեամբ, հայեցողական կենաց միտումով եւ աստուածաբանական հմտութեամբ»: (Վարդ Մխիթարայ Աբբայի Սեբաստացւոյ, Վենետիկ 1932, էջ 277):

Ընդհանուր գիծերով ծանօթացնենք թէ ո՛վ էր Սաղաթուքի Վարդապետ Առաքելեան:

Ան ծնած է Կարին 1666ին: Մանուկ հասակին ուշիմ եւ ուսումնասէն, տասնութեց տարեկանին կ'երթայ Էջմիածին, որ այն ատեն կը նկատուէր իբրեւ գիտութեան վառարան մը հայոց համար: Եթէ չի գտներ հոն իր փնտռած լոյսն ու հմտութիւնը — նոյնը տասը տարի ետքը պիտի պատահէր Մխիթար Սեբաստացիին —, բախտը կ'ունենայ սակայն հոն հանդիպելու Վարդան Վարդապետ Յովնանեանի, Հռոմի Տարածման Ս. Հաւատոյ Վարժարանին նախկին աշակերտներէն, որուն շատ կը կապուի, հրապուրուած անոր գիտութենէն, առաքելական կենցաղէն եւ վարուելակերպէն:

Երբ 1682ին Վարդան Վարդապետ Էջմիածնէն կը մեկնի Հռոմ, Սաղաթուքի պատանիին թախանձանքներուն անսպով, զայն իրեն հետ կը տանի Յաւիտեանական Քաղաքը եւ կը յաջողի ընդունիլ տալ Ուրբանեան Վարժարանին մէջ իբրեւ աշակերտ:

Քրիստոնէութեան կեդրոնին մէջ, ամէնէն հռչակաւոր ուսուցիչներու առաջնորդութեամբ Սաղաթուքի կը զարդանայ ամէն տեսակ, եւ մանաւանդ իմաստասիրական եւ աստուածաբանական գիտութեանց մէջ, իր վրայ հրաւիրելով ուշադրութիւնն ու սէրը բարձրաստիճան եկեղեցականներու, եւ արժանանալով անոնց մեծ վստահութեան:

Ուրբանեան Վարժարանի ուսանողներու ցանկին մէջ իր անունին մօտ կը կարդանք հետեւեալ շատ պատուաբեր ծանօթութիւնը, գրուած անշուշտ այն ժամանակուան Վարժարանի մեծաւորին կողմէ. «Սաղաթուքի սորվեցաւ իմաստասիրութիւն եւ աստուածաբանութիւն մեծ օգուտ քաղելով. եւ իր ծէսով քահանայ ձեռնադրուելէ յետոյ, ընդունեցաւ նաեւ վարդապետական վրկայական: Բարքով յոյժ մաքուր է. հեղահամբոյր եւ նախանձախնդիր մերձաւորի բարիքին»:

Ուսմունքը այսպէս փայլուն կերպով աւարտելէ ետք, Սաղաթուքի Վարդապետ կը շրջուի իբր առաքելական քարոզիչ հայ Բնագաւառի զանազան վայրերը եւ մանաւանդ Կ. Պոլիս: «Քարոզչական ասպարիզին վրայ Սաղաթուքի Վարդապետի ունեցած յաջողութիւնը բացառիկ երեւոյթ մ'էր. քարոզչի մը ամենէն աւելի կարեւոր ձիրքերն ունէր նա, վառվռուն եւ գրաւիչ ոճ մը, անստղիւտ վարք, խոր հմտութիւն աստուածաբանական խնդրոց, համարձակ էր եւ առանց ակնառութեան իր կրօնական սկզբունքները քարոզելու մէջ» (Թորոսեան. Անդ, էջ 272):

Սաղաթուքի Վարդապետ անընդհատ թղթակցութեան մէջ էր միանգամայն Ս. Աթոռին հետ, որ իրեն կը վստահէր փափուկ ու կարեւոր գործեր: Մասնաւոր յիշատակութեան արժանի է 1698ին իր կատարած ճամբորդութիւնը Էջմիածին իբրեւ պատգամաւոր Իննովկենտիոս Ս. Պապին, որ ընծաներ եւ կոնդակ կը շրջէր Նահապետ Կաթողիկոսին:

Կաթողիկոսը զինքը կ'ընդունէր մեծ շուքով, եւ կը լիազօրէր ամէնուրեք շարունակելու իր քարոզութիւնը կաթողիկէ ճամբորդութեանց համաձայն: «Այդ առթիւ աւելի եւս մեծցաւ Սաղաթուքի Վարդապետին անունը. Պոլիս դարձաւ այնպիսի հեղինակութեամբ, որուն առջեւ գլուխ կը ծռէր ամէն մարդ սկսեալ ամիրաներէն եւ պատրիարքներէն, եւ 1699 եւ 1700 թուականներուն, նոյնիսկ պատրիարքական եկեղեցւոյն մէջ համարձակ կը քարոզէր կաթողիկէ կրօնից վարդապետութիւնները» (Թորոսեան. Անդ, էջ 273):

Սաղաթուքի Վարդապետ առաքելական եւ քարոզչական գործունէութեան միացուց հրատարակչականը, եւ զանազան նիւթերու շուրջ երկասիրութիւններ ձգած է թէ՛ հայ եւ թէ՛ լատին լեզուներով, որոնց խորապէս հմտացած էր:

Մխիթար Սեբաստացի, զոր Աստուած շնորհեց իբր լուսանորոգ մը Հայրութեան Ժէ եւ ԺԸ դարերուն, կրօնքի ուղղափառութեան եւ գիտութեան տարածումով, սերտօրէն զօղուած է Սաղաթուքի Վարդապետին:

Ծնած 1676ին Սեբաստիա — Սաղաթուքի Առաքելեանէ տասը տարի ետքը — ինքն ալ մանուկ հասակին սիրահար լոյսի եւ գիտութեանց, շրջան ըրած

էր հայկական զանազան վանքեր էջմիածին, Սեւան, Բասեն, սակայն առանց յազուրդ գտնելու իր փափաքին: Մինչ այն կազդուրուած Աստուածամօր տե- սիլքով, խորապէս համոզուած կաթողիկէ կրօնքին ո՛չ միայն ճշմարտութեան, այլ նաեւ թէ այն էր սուրբ հաւատքը մեր նախնեաց, միանգամայն խորապէս կարեկցելով Ազգին ողբալի վիճակին վրայ կրօնական եւ մշակութային տե- սակէտէ, մեծ դաղափարը յղացած էր հիմնելու Միաբանութիւն մը, որ նը- լիրուէր վսեմ առաքելութեան բարձրացնելու Հայութիւնը ճշմարիտ կրօնքի, գիտութեանց եւ տոհմային ինքնագիտակցութեան լոյսով:

Ո՞վ պիտի կանգնէր սակայն այս դժուարին եւ գրեթէ անկարելի մեծ ձեռնարկին գլուխը: Յատուկ է սրբակեաց անձերու որ իրենց բովանդակ հո- դեւոր չէնք ու գործունէութիւնը բարձրացնեն քրիստոնէական խոնարհութեան վրայ եւ նախընտրեն վերջին տեղը գրաւել քան թէ առաջնորդ ըլլալ:

Մխիթար, իսկապէս աստուածամերձ եւ խոնարհ հոգի, կարծեց դառն ըլլալ այդ նախախնամական Դէմքը յանձին Սաչատուր Վարդապետի, որուն առաքինութեան եւ գիտութեան համբաւը լայնօրէն տարածուած էր ինչպէս Քրիստոնէութեան Մայրաքաղաքը, նոյնպէս նաեւ Արեւելք: Փութաց ուրեմն Պոլիս 1697ի Ապրիլ ամսոյն: Հոն, ներկայ ըլլալով Սաչատուր Վարդապետի քարոզութեանց, հաստատուեցաւ անոր հանդէպ տաժած հիացումին մէջ: Պատեհ առիթով անոր պարզեց իր միտքը հիմնելիք Միաբանութեան վրայ, եւ թախանձազին խնդրեց որ ինք - Սաչատուր - գլուխն անցնի այդ ձեռնար- կին, մինչ Մխիթար ինքզինքը երջանիկ պիտի համարէր անոր աջակիցն ու օգնականն ըլլալով:

Սաչատուր մեծապէս դուլեց Մխիթարի մտադրութիւնն ու զայն քաջա- լերեց: Սակայն, լիովին գիտակից ձեռնարկին կապուած հսկայ դժուարու- թիւններուն, ի սպառ հրաժարեցաւ իրեն առաջարկուած առաջնորդութենէն:

Հակառակ անոր, սիրոյ եւ բարեկամութեան զօղը այնուհետեւ միացուց այս երկու հոգիները:

Եփրեմ եւ Աւետիք Պատրիարքներու օրով, Կաթողիկէից դէմ ասոնց յա- րուցած հալածանքներուն պատճառաւ, Սաչատուր Վարդապետ խոյս կու տայ Պոլսէն եւ կը քաշուի, 1707ին, Վենետիկ, ուր, տարի մը ետքը Ս. Աթոռը զինքը կ'անուանէ առաջնորդ վենետարնակ հայերուն, որոնք ունէին իրենց յատկացուած Ս. Սաչի եկեղեցին:

1715ին Մխիթար ալ կը հասնի Վենետիկ իր աշակերտներով: 8 Սեպ- տեմբեր 1717ին հանդիսաւոր մուտք կը գործէ Ս. Ղազարու կղզին, զոր Հան- րապետութեան Ծերակոյտը շնորհած էր իր Միաբանութեան: Այս ամէնը խոր ուրախութիւն կը պատճառէր Սաչատուր Վարդապետին, որ կը տեսնէր պը- սակումը մեծ ձեռնարկին եւ երկար տարիներու տեղողութեան ալ պիտի կա- րենար վայելել անմիջական ներկայութիւնը մեծ Աբրահամ:

1719ին Ս. Աթոռը Սաչատուր Վարդապետը կը զրկէ իրրեւ Առաքելական Այցելու Տրանսիլվանիոյ հայերուն: 1725ին, Յորեւանի տարւոյն առթիւ, զայն Հոռոմ կը գտնենք: Այս եւ ուրիշ բացակայութիւններու միջոցին, Մխի- թար Աբրահամ սիրով Ս. Սաչ եկեղեցւոյ կառավարութիւնը եւ Վենետարնակ հայերուն հոգ-հոգւոցը կը յանձնանէ իր Միաբաններուն միջոցաւ:

1740ին Սաչատուր Վարդապետ, 74 տարեկանին, ծանրօրէն կը հիւան- ռանայ, եւ նոյն տարուան Ապրիլ 30ին հոգին կ'աւանդէ, վայելելէ ետք նիւ- թաղէ: Եւ հոգեկան ամէն հոգ եւ խնամք Մխիթարի եւ անոր Միաբաններուն կողմէ: Իր բոլոր ունեցածն ու գրութիւնները կը կտակէ Մխիթարի Միաբա- նութեան, խնդրելով որ անոնց փոխարէն մշտնջենաւորապէս Ս. Պատարագ մատուցուի ի նպաստ իր հոգւոյն Միաբանութեան կողմէ: Այդպէս նաեւ յետ մահու իր անունը օրհնութեամբ կը յիշուի Մխիթարի Ուխտին մէջ եւ անոր շիրմին մօտ:

Սաչատուր Վարդապետին մարմինը կ'ամփոփուի Ս. Սաչ եկեղեցիի մէջ հետեւեալ տապանադիր արձանագրութեամբ. «Աստ հանգուցեալ է - Վար- դապետն Աստուածարան - Որ Սաչատուր յարանուանիւր Արզրումանեան. - Ամք երեսուն նաեւ երկու այնմ յաւելան - Յորս աստ եկաց ազգիս Հայոց ի հովուութեան. - էր սրբակեաց եւ արժանի մեծ գովութեան. - Եւ ջա- տագով Հոռոմէական ճշմարտութեան. - Յամի Տեառն 1740 Ապրիլի 30»:

Սաչատուր Վարդապետ միշտ իրրեւ իրենը նկատեց Մխիթարի ձեռնար- կը, անոր աշակերտներուն դասադրքեր պատրաստեց, եւ անոր զօրաւոր եւ ազդեցիկ պաշտպանն ու ջատագովը հանդիսացաւ ամէն պարագաներուն մէջ եւ բոլորին մօտ, ի մասնաւորի Ս. Աթոռին առջեւ:

Վասնզի եթէ Մխիթար իրրեւ քարոզիչ կաթողիկէ վարդապետութեան հալածուեցաւ ոչ-կաթողիկէ ազգայիններու եւ Պատրիարքներու կողմէ, հա- կառակութեան հանդիպեցաւ նաեւ կաթողիկէներու կողմէ լատինաձէս թէ հայածէս: Նորութիւն մըն էր Մխիթար Աբրահամ ձեռնարկը: Քարոզութեան, ծիսակատարութեան մէջ ալ ձեւական տարբերութիւններ կային: Սակայն հա- կառակութեան գլխաւոր պատճառներն էին մարդկային նկատումներ, նախանձն ու անհասկացողութիւնը եւ այլ շարժառիթներ խժրժանքի առիթ կու տային կարգ մը անձերու, որոնք կը ձգտէին կասկածելի դարձնել Մխիթարի գործը յաջս Ս. Աթոռին:

Հետեւաբար որքան նախախնամական եղան Սաչատուր Վարդապետին տաժած սէրն ու համակրանքը Մխիթարի եւ անոր գործին հանդէպ: Անտա- րակոյս, ասոնք ինքնին պիտի արդարանային Ս. Աթոռի առջեւ, որ անաչառ եւ իմաստուն ատեան մ'է եւ միանգամայն մայր մը գորովալից: Բայց որքան վճռական նշանակութիւն ունեցաւ միջամտութիւնը Սաչատուր Վարդապե- տին, որուն վարկը այնչափ բարձր էր Հոռոմի մէջ, եւ որուն խօսքը, ինքնին համոզիչ, կը բխէր մեծ Սերաստացիին եւ անոր գործին հանդէպ ունեցած ամենախորունկ եւ ամէնէն իրաւացի հիացումի եւ գնահատանքի ջինջ զգա- ցումներէ:

Որովհետեւ այդ յարձակումները յաճախ կը կրկնուէին, Սաչատուր Վար- դապետն ալ ստէպ անգամ պաշտպանողական գրութիւններ կ'ուղղէր Հոռոմ: Կը գոհանանք մէջբերելով ջատագովական մը, զոր ուղղած է Հաւատոյ Տա- րածման Ս. Ժողովի Ծիրանաւոր Հայրերուն: Գրութիւնը կը կրէ 27 փետրուար 1717 թուականը:

«Լսեցի որ անցեալին եւ հիմա ալ հայոցմէ ոմանք գէշ տեղեկութիւն տուած են Մխիթար հայ Աբբաճօր եւ անոր Միաբաններուն մասին, որոնք երբեմն Պեղոպոնէս էին եւ այժմ Վենետիկ կը բնակին, իբրեւ թէ անուս ըլլան եւ անատակ առաքելական պաշտօնի, եւ թէ կաթողիկէ հաւատքին մէջ ոչ ամբողջովին ուղղադաւան: Բոլորովին սխալ է տեղեկութիւնը երկու կէտերուն նկատմամբ ալ: Ծուրջ քսան տարի է որ կը ճանչնամ այս Աբբաճայրը եւ անոր գլխաւոր Վարդապետներն ու միանձուները:

«Երբ ես կը տարածէի կաթողիկէ հաւատքը Պոլիս, վերոյիշեալ Աբբաճայրը կը քարոզէր Կալաթա, եւ անոր Վարդապետները ուրիշ տեղեր:

«Մխիթար Աբբան իմ բազուկս էր, անոր Վարդապետները ինծի օժանդակ ձեռքեր էին եւ կառքեր որոնցմով ուրիշ վայրեր կը փոխադրուէի, բոլորը միանգամայն ընկեր եւ դերազանցօրէն ատակ դործիքներ տարածելու կաթողիկէ հաւատքի: Եւ տարածեցինք եւ անթիւ հայեր բերինք կաթողիկէ հաւատքի: Անոր Վարդապետները ամենազառն աշխատանքները համբերութեամբ յանձն առնելով զանազան վայրեր նոյն կաթողիկէ հաւատքը տարածեցին: Այսպէս ուրեմն առաքելութեան իրաւունքը դործով ալ ձեռք ձգած են մեր ազգին մէջ, Աստուծոյ շնորհիւ...»

«Այս Միաբանութիւնը հիմնուած է եւ Զեր Վսեմութեանց կողմէ հաստատուած կաթողիկէ հաւատքի քարոզութեան համար: Միաբանները այս նըպատակին համար հաւաքուած են... Թէեւ ես անոր անդամ չեմ, սակայն այս Միաբանութիւնը իմս է, այս Միաբանները իմիններս են: Այդ նպատակին համար անոնք այս կողմերը, Վենետիկ հիմնեցին վաղ մը, զոր տակաւին կ'ուզեն ընդլայնել, որպէսզի, մինչ իրենցմէ ոմանք ուղղափառ հաւատքի քարոզութեան նուիրուած են իրենց կեանքի վտանգով իսկ, ուրիշներ ուսմամբ եւ վարդապետութեամբ պարապին ապահով տեղ մը եւ կրօնաւորական կեանքի ատակ երիտասարդներ ժողովեն, որոնք ուսանին հայ լեզուով եւ դառնալով կատարեալ կրօնաւորներ եւ առաքելական դործի յարմար պաշտօնեաներ, եւ քաջածանօթ հայերէնի, երթան ատենին քարոզելու հռոմէական կաթողիկէ հաւատքը հայ ազգին մէջ»:

«Եւ արդէն շատեր այսպէս համախմբուեցան եւ շատ լաւ ուսում առին եւ ամենաբարի կրօնաւորներ դարձան, ամէն տեղ սփռեցին եւ կը սփռեն առաքելութիւններու բուրումը: Տեսնողներուն օրինակ են առաքելութիւններու, կը հանդիսանան ընտիր եւ անօթ յոյժ բուրումնաւէտ, կրօնաւորական ծաղիկներ: Անոնք պատին ու փայլն են կրօնաւորական կեանքին»:

«Մխիթար Աբբաճօր անձին զալով, կ'ըսեմ որ հիմնալի ընդունակութիւն ունի: Բիշ օրերու ընթացքին, երիտասարդութեան ատեն, իմ քովս սորվեցաւ հայ քերականութիւնը հայ լեզուով: Իրեն համար հայերէն յօրինեցի բոլոր գիտութիւնները, նաեւ թուարանական եւ աստուածաբանական: Կատարեալ կերպով սորվեցաւ բոլոր ազատ արուեստները, բոլոր գիտութիւնները եւ բովանդակ աստուածաբանութիւնը... Կրօնաւոր մըն է օժտուած նշանաւոր սըրբութեամբ եւ սքանչելի խոհեմութեամբ, յոյժ համեստ եւ իմաստուն անձ մը: Հայ լեզուով յօրինած է Մեծն Ալպերտոսի Բովանդակութեան լուծումները իմաստութեամբ եւ սրբազան գիտութեամբ: Այդ գիրքը արդէն հոս տպա-

դրուած է: Սխալ տեղեկութիւններ տուողները կրնան գնել այդ գիրքը, կարգալ եւ տեսնել անոր իմաստութիւնը: Մեթոն իր վանքին մէջ հասարակաց դպրոց բացաւ, եւ ինք սորվեցուց իրեններուն հայ լեզուով բնական եւ աստուածաբանական գիտութիւնները: Յոյժ սրբակեաց եւ զգօն է, տիպար առաքելութեանց, զարդ հայ ազգին, պատիւ իր Միաբանութեան, փայլ եւ արեւ գինքը ճանչցողներուն, որոնք չեն ուրանար ճշմարտութիւնը: Իտալերէնն ու լատիներէնը ես չսորվեցուցի: Ինքիմէ սորվեցաւ...: Անտարակոյս վախնալու են անոնք որ կը ձգտին հալածել այսքան նշանաւոր կրօնաւոր մը, յայտնապէս Ս. Հոգւոյն դէմ կը մեղանչեն»:

Կը փութանք տալ վերջաբանը, ուր Խաչատուր Վարդապետ սրտի խորէն կոչ կ'ընէ Ս. Աթոռին Մխիթար Աբբաճօր ի նպաստ եւ զայն ջերմօրէն կը յանձնարարէ:

«Ու Սրբազնասուրբ Հռոմէական Եկեղեցի, ճշմարիտ Հարսն Քրիստոսի, ամենազօրաւոր՝ դժոխքի դռներու դէմ, օժտուած յոյժ մասնաւոր ընթերակալութեամբ Ս. Հոգւոյն վճռելու մէջ, միշտ անյաղթ հանդիսացած, ապաստան, ամրոց, աշտարակ անոնց համար, որոնք անգուր ճալածանք կը կրեն անխորհուրդներու կողմէ: Դուք որ զանոնք միշտ պաշտպանեցիք, ազատեցիք հալածիչներու ձեռքէն, բռնութենէ պահեցիք եւ մխիթարեցիք, Դուք որ, ունենալով Փեսայիդ հողին, անկէ զրկուածները եւ անոր հողին ունեցողները եւ անոր փառքը փնտռողները լաւ կը ճանչնաս եւ սուտերէն կը զանազանես, Քեզի կը յանձնարարեմ իմ աղիքս, իմ սիրտս, իմ աչքերս: Եւ քսան տարիներու մեծագոյն աշխատանքներուս դերադնիւ դործ ու արդիւնքը, այսինքն Մխիթար Աբբան եւ անոր Միաբանութիւնը: Այս մարդը իմ ժառանգութիւնս է, անոր Միաբանութիւնը իմ յաջողութիւնս է: Դու ինքն վկայ ես թէ ես Քու հաւատարիմ զաւակդ եմ եւ սպասաւորդ, Մխիթար Աբբան ալ քու հաւատարիմ որդիդ եւ սպասաւորդ: Եւ յիշաւի, ան ուրիշ բան չէ բայց եթէ Խաչատուր Առաքելեան անարժան առաքեալ երկրորդուած, եւ անոր Միաբանութիւնը ուրիշ բան չէ բայց եթէ Խաչատուր Առաքելեան անարժան առաքեալ երջանկապէս բազմապատկուած եւ Աստուծոյ շնորհիւ բազմապատկելի: Մեծապէս յուսալից եմ որ այս Միաբանութիւնը բովանդակ Հայ Ազգը պիտի տանի Հռոմայ Եկեղեցւոյ, որովհետեւ եթէ ունի անխորհուրդ հալածիչներ՝ ունի նաեւ սքանչելի յաջողութիւններ հոգեւոր մարդի եւ կաթողիկէ հաւատքի տարածման մէջ» (Archivio di Prop. Fide, Scritture non riferite, anno 1717).

Եթէ դժուար է գտնել աւելի ջերմ եւ յուզիչ խօսքեր ի պաշտպանութիւն մեծ Սերաստացիին եւ անոր Միաբանութեան, աւելի դժուար է գտնել արտայայտութիւններ՝ որոնք վկայեն թէ ո՛ր աստիճանի բարեկամական սիրով կապուած, մանաւանդ նոյնացած էր Խաչատուր Վարդապետ Մխիթարի հետ:

Եթէ բարեկամութիւնը, ըստ Արիստոտելի եւ Ս. Թովմաս Ազոլինացիի, կը սահմանուի «Փոխադարձ սէր բարիքներու որոշ հաղորդութեամբ», տեղին է հոս հարցնել թէ ի՞նչ էր հիմն ու աղբ այս բարեկամութեան, և ի՞նչ բարիքներ իրարու կը հաղորդէին այս երկու լուսապայծառ հոգիները:

Երանանշնորհ Հիմնադիր Հօր խնկելի վարքին պատմարանը Հ. Յովհաննէս Վ. Թորոսեան ասոր պատասխանը կու տայ հետեւեալ խօսքերով. «Այդ երկուքին մէջ եղած սիրոյ եւ միութեան կապը ոչ բախտի եւ պարագայից դուրս գաղիպութենէ, կամ բարուց եւ բնաւորութեանց հանդիմանութենէ յանձն եկած էր, այլ միայն կրօնական տեսութեանց եւ առաքինի վարուց նմանութիւնն էր, որ անխղիւ զօգիւ միացուցեր էր երկու հոգիները, որոնք այլուստ տարբեր նկարագիրներ ունէին» (Թորոսեան. Անդ, էջ 274): Ուստի նմանութիւն կրօնական տեսութեանց. այսինքն յարում կաթողիկէ Հռոմէական Եկեղեցւոյ վարդապետութեան անկեղծ հաւատքով, անդադար ուսումով եւ ազամանդեայ համոզումով թէ այդ է միանգամայն ամենահարադատ ապրումը մեր Ս. Հայրերու տեսած, փառարանած, իբր աւանդ Հայութեան փոխանցած Քրիստոսի միակ եւ տիեզերական Եկեղեցւոյ:

Ո՛չ միայն կարեկցութեան, այլ նաեւ բոլոր ընդվզումի առիթ է հանդիպել Մխիթար Աբրահամ մասին կարգ մը արտայայտութիւններու, որոնք կը ձգտին պատեհապաշտական, մակերեսային եւ կեղծուպատիր ներկայացնել անոր յարումը Հռոմի Ս. Աթոռին: Այդպէս արտայայտուողները բնաւ թաւանոր յարումը Հռոմի Ս. Աթոռին: Այդպէս արտայայտուողները բնաւ թաւանոր փանցած չեն, աւա՛ղ, թէ որքան պարզ է եւ լուսապայծառ աստուածարեալ հոգիներու խորքը, ուր կեղծիքը պահ մը իսկ չի կրնար հոգ գտնել: Սուրբերը չափազանց առաքինի են անկեղծ չըլլալու համար, մանաւանդ ամենակարեւոր եւ վճռական կէտի մէջ, ինչպէս են կրօնական ճշմարտութիւնները:

Թէ որքան անկեղծօրէն եւ անվերապահօրէն Մխիթար Աբրահամ յարած էր կաթողիկէ վարդապետութեան՝ արեւու նման պայծառ է անոնց համար, որոնք ուսումնասիրած են անոր կեանքը, կարգացած են անոր բազմահատոր հրատարակութիւնները, մասնաւորապէս Մատթէի Մեկնութիւնը:

Բայց ահա հոս ալ խաչատուր Վարդապետ ջատագով կը կանգնի. քառասնամեայ ամենամտերիմ ծանօթութեան եւ դրեթէ կենակցութեան զօրութեամբ կը հաւատէ իր սրբակեաց բարեկամին անսասան ուղղափառութիւնը եւ հպատակութիւնը Հռոմի Ս. Աթոռին: Ան համարձակօրէն կը դրէ. «Ինչպէս եւ կարելի չէ տարակուսիլ թէ խաչատուր Առաքելեան հաւատարիմ զաւակն է եւ սպասաւորը Կաթողիկէ Եկեղեցւոյ, նոյնպէս կարելի չէ տարակուսիլ թէ Մխիթար նմանապէս հաւատարիմ զաւակն է եւ սպասաւորը Կաթողիկէ Եկեղեցւոյ»:

Թէ՛ խաչատուր թէ՛ Մխիթար, կաթողիկէ հաւատով լուսաւորուած, ճշմարտութեան ապրումով հարուստ եւ խանդավառ՝ քարոզիչներ եւ առաքելներ հանդիսացան Հայ Ազգին մէջ, նախանձախնդիր միանգամայն հայ լեզուին եւ մշակոյթին, որքան կը ներէին ժամանակին պայմանները: խաչատուր Վարդապետ հաճոյքով կը յիշէ թէ ինք ուսուցած է Մխիթարի հայ լեզուն, թէ հայերէն քերականութիւն մըն ալ յօրինած է, ինչպէս ուրիշ երկասիրութիւններ հայ լեզուով: Իսկ թէ Մխիթար ի՛նչ դեր կատարած է, անձամբ եւ իր հիմնած Ուխտով, կաթողիկէ քարոզութեան եւ հայ լեզուի ու մշակոյթի տեսակէտներէ՝ հանրածանօթ է:

Խաչատուր եւ Մխիթար երկու լուսաւոր դէմքեր ծագած ժէ եւ ժԸ դարերուն, երբ հայութիւնը կ'ապրէր մոռալ չըջան մը կրօնապէս եւ քաղաքա-

կանօրէն, նոր դարադրուի մը բացին: Մխիթար պիտի չնախանձի եթէ իր բարեկամը հաւասար դժի վրայ դրուի իրեն հետ: Անոնք որքան աւելի բեղուն կերպով եւ աւելի ընդարձակօրէն պիտի ճառագայթէին բովանդակ Հայութեան վրայ, եթէ ժամանակին Ազգին լրումը ըմբռնած ըլլար լուսաւոր ուղին, որ կ'երկարէր Արեւմուտքէն, որուն միշտ մեր Ազգը մէտ եւ սիրահար եղած է, երբ յառաջդիմած է, անխաթար պահելով իր ծիսական եւ լեզուական ինքնութիւնը: Այն ատեն որքան տարբեր պիտի ըլլար Հայութեան պատմութիւնը վերջին երկու դարերու ընթացքին:

Այսօր, երբ Մխիթարեան Միաբանութիւնը, մեր նուիրապետութիւնը եւ բովանդակ Հայութիւնը երախտադրութեամբ կը վերյիշեն երկրորդ հարիւրամեակը մահուան մեծ Սերաստացիին եւ մենք կը կցենք յիշատակը անոր մըտերիմ եւ սրտակից բարեկամ Խաչատուր Վարդապետին, Հայութիւնը կ'ապրի դարձեալ ամենամոռալ չըջաններէն մէկը իր բովանդակ բազմադարեան պատմութեան:

Սիրոյ եւ դորձակցութեան սքանչելի օրինակը, զոր կը ցուցադրեն իրենց կեանքով Մխիթար՝ հայր Միաբանական սերունդի, եւ Խաչատուր՝ տիպար աշխարհիկ կղերի, խորհրդանշանը եւ տեսլականը կը մնան այն սերտ սիրոյ եւ անձնուէր դորձակցութեան, որոնցմէ մեր միաբան եւ աշխարհիկ կղերը միշտ աւելի պիտի ներշնչուին խրախուսելու, բարձրացնելու համար ճշմարիտ կրօնքով, առաքինափայլ վարքով, լուսաւոր ազգասիրութեամբ, ընդարձակ մըշակոյթով, Հայութիւնը համայն որուն համար մեր յարատեւ աղօթքն է որ ըլլայ դարձեալ « հանուրց հիւսիսականաց վեհադոյն»:

Պէյրուք, 22 Յունուար 1949

† ԿԱՐԴ. ԳՐԻԳՈՐ ՊԵՏՐՈՍ ԺԵ
Կաթողիկոս-Պատրիարք Տանն Կիլիկիոյ

L'ABBÉ MEKHITAR ET KHATCHADOUR VARTAPET

(Traduction du texte arménien de la page 30)

«C'est une rare et divine chose que l'amitié, dit Lacordaire (*Ste Marie Madeleine*, Oeuvres T. IX, p. 363), le signe assuré d'une grande âme et la plus haute des récompenses visibles attachées à la vertu ».

Mekhitar de Sébaste, âme ornée de vertus, s'était attiré, par les liens de l'amitié, de nombreux amis.

Parmi ceux-ci, celui qui occupa une place de choix fut, sans contredit, Khatchadour Vartapet Arakélean, dont le Père Torossean écrit: «Il a été un ami sûr et sincère, ayant pour Mekhitar de l'admiration et de la vénération. Réciproquement, Mekhitar aussi avait les mêmes amour, admiration et vénération pour Khatchadour Vartapet. De leur amitié sainte et chrétienne, je ne trouve aucun exemple en dehors de celui de l'amitié qui liait Saint Basile et Saint Grégoire de Nazianze: Mekhitar, unissant, par sa nature ardente, la vie contemplative à l'active, s'approche davantage de Saint Basile; alors que Khatchadour Vartapet, par sa nature calme, son inclination à la vie contemplative et son érudition théologique, nous rappelle plutôt Saint Grégoire de Nazianze» (*Vie de l'Abbé Mekhitar de Sébaste*, Venise 1932, p. 277).

Esquissons d'abord, en des lignes générales, la figure de Khatchadour Vartapet Arakélean :

Né à Erzeroum en 1666, il paraît, dès son bas âge, intelligent et studieux. A 16 ans, il se rend à Etchmiadzin, qui était alors considérée, par les Arméniens, comme un foyer de science. S'il n'y trouve pas la lumière et l'érudition qu'il cherchait — la même chose arrivera à Mekhitar dix ans plus tard, — il a du moins la chance d'y rencontrer Vartan Vartapet Hovnanian, ancien élève du Collège de la Propagande de Rome, auquel il s'attache beaucoup, charmé par sa science, sa vie apostolique et sa conduite.

Lorsqu'en 1682 Vartan Vartapet quitte Etchmiadzin pour Rome, accédant aux prières instantes du jeune Khatchadour, il le prend avec lui à la Ville Eternelle et réussit à le faire admettre comme élève au Collège Urbain.

Dans le centre de la Chrétienté, sous la direction des maîtres les plus célèbres, Khatchadour progresse d'une manière générale, et tout particulièrement dans

les sciences philosophiques et théologiques, s'attirant l'attention et l'affection de hauts dignitaires ecclésiastiques, et méritant leur confiance.

Auprès de son nom, dans la liste des élèves du Collège Urbain, nous lisons la très élogieuse note suivante, écrite sans doute par le Supérieur contemporain : « Khatchadour a appris, avec beaucoup de profit, la philosophie et la théologie; et, après avoir été ordonné prêtre dans son rite, il a obtenu aussi le diplôme de Docteur. Il est d'une vie très intègre, affable et zélé pour le bien du prochain ».

Après avoir terminé ses études d'une manière si brillante, Khatchadour Vartapet est envoyé comme Missionnaire Apostolique dans les différents centres arméniens, et spécialement à Constantinople. « Le succès qu'il eut dans la prédication, dit le P. Torossean (p. 272), fut extraordinaire : il avait les qualités les plus nécessaires au prédicateur, un style ardent et attrayant, une vie intègre, une érudition profonde dans les questions théologiques; il était courageux et franc dans la prédication de ses principes religieux ».

Khatchadour Vartapet entretenait aussi une correspondance ininterrompue avec le Saint-Siège, qui lui confiait d'importantes et délicates missions. Il faut mentionner spécialement son voyage de 1699 à Etchmiadzin, comme Délégué du Souverain Pontife Innocent XII, qui envoyait des dons et une Bulle au Katholikos Nahapet.

Ce dernier le reçoit avec honneur et l'autorise à continuer partout sa prédication conformément aux vérités catholiques.

A cette occasion, le nom de Khatchadour est devenu encore plus célèbre. Il rentra à Constantinople avec une telle autorité que tous, en commençant par les Patriarches et les notables, s'inclinaient devant lui. En 1699 et 1700, il prêchait librement, dans l'église patriarcale, la doctrine de la religion catholique.

Khatchadour Vartapet a uni à son activité d'apôtre et de prédicateur celle d'écrivain, laissant des publications sur différents sujets, dans les langues arménienne et latine, qu'il possédait à fond.

Mekhitar de Sébaste, que Dieu a envoyé, aux XVII et XVIII siècles, au peuple arménien, comme un nouvel Illuminateur, pour la propagation de la vraie religion et de la science, était intimement lié à Khatchadour Vartapet.

Né en 1676, à Sébaste, — dix ans après Khatchadour Arakélean, il était lui aussi, amoureux dès son bas âge de lumière et de science, et avait circulé dans les différents couvents arméniens, à Etchmiadzin, à Sévan, à Bacène etc., mais sans arriver à apaiser sa soif.

C'est alors que, encouragé par l'apparition de la Vierge, profondément convaincu non seulement que la religion catholique était la vraie religion mais qu'elle était aussi la sainte foi de nos Pères, mû également d'une profonde pitié devant le triste état religieux et culturel de la nation, il avait conçu la grande idée de fonder une Congrégation, qui se consacrerait à la sublime mission d'élever

le peuple arménien par la lumière de la vraie religion, des sciences et de la conscience nationale.

Mais, qui allait se mettre à la tête de cette grande entreprise, difficile et presque impossible?

Il est propre aux saints de fonder tout leur édifice spirituel et leur activité sur l'humilité chrétienne, préférant occuper la dernière place plutôt que d'être le chef.

Mekhitar, réellement animé de l'esprit de Dieu et humble, crut avoir trouvé cet homme providentiel dans la personne de Khatchadour Vartabed, dont la renommée de vertu et de science s'était répandue dans la capitale de la Chrétienté, comme dans tout l'Orient.

Il se rendit donc, en avril 1697, à Constantinople, où, après avoir assisté aux sermons de Khatchadour Vartapet, il fut confirmé dans l'admiration qu'il avait pour lui. Au moment propice, il l'entretint de son intention de fonder une Congrégation, et le pria instamment de se mettre à la tête de l'entreprise, alors que lui, (Mekhitar) serait heureux d'être son collaborateur et son auxiliaire.

Khatchadour Vartapet loua beaucoup l'intention de Mekhitar et l'encouragea. Mais, pleinement conscient des difficultés de l'entreprise, il refusa nettement la charge de supérieur, qui lui était proposée.

Malgré cela, ces deux âmes resteront dorénavant unies par le lien de l'amour et de l'amitié.

Du temps des Patriarches Yéprem et Avétik, à cause des persécutions soulevées par ces derniers contre les Catholiques, Khatchadour Vartapet s'éloigne de Constantinople et se retire, en 1707, à Venise, où, un an plus tard, le Saint Siège le nomme Recteur de l'Eglise de la Sainte Croix, que les Arméniens avaient à leur disposition dans cette ville.

Mekhitar aussi arrive à Venise, avec ses élèves, en 1715. Le 8 Septembre 1717, il fait son entrée solennelle dans l'île de St Lazare, que le Sénat de la République avait accordée à sa Congrégation.

Ce fait causa une grande joie à Khatchadour Vartabed, qui voyait le couronnement du grand projet et pensait pouvoir goûter, ainsi, pendant de longues années, la présence immédiate du Grand Abbé.

Khatchadour Vartapet est envoyé, en 1719, par le Saint-Siège, comme Visiteur Apostoliques des Arméniens en Transylvanie. En 1725, nous le trouvons, à l'occasion de l'Année Sainte, à Rome. Durant ces absences, l'Abbé Mekhitar assure volontiers, par ses religieux, l'administration de l'Eglise de la Sainte Croix et la cure spirituelle des Arméniens résidant à Venise.

En 1740, Khatchadour Vartapet, septuagénaire, devient gravement malade et rend son âme à Dieu le 30 avril, après avoir été l'objet de toutes sortes de soins matériels et spirituels de la part de Mekhitar et de ses religieux. Il lègue tout son avoir et tous ses écrits à la Congrégation de Mekhitar, en demandant qu'en échange une messe perpétuelle soit célébrée pour son âme de la part de

cette Congrégation. Ainsi, même après sa mort, son nom reste en bénédiction dans l'ordre de Mekhitar et près du tombeau de ce dernier.

Le corps de Khatchadour Vartapet est enterré dans l'Eglise de la S.te Croix, sous cette inscription lapidaire :

«Ci-gît le Maître théologien,
appelé Khatchadour d'Erzeroum,
qui, trente deux ans durant,
fut à la tête
de la Communauté Arménienne.

Il eut une vie sainte,
digne de grands éloges,
défenseur de la vérité romaine.

Le 30 Avril de l'an du Seigneur 1740».

Khatchadour Vartapet a toujours considéré comme sienne l'Oeuvre de Mekhitar. Il composa, pour ses élèves, des livres scolaires; il devint, dans toutes les circonstances et auprès de tous, spécialement devant le Saint-Siège, son défenseur et protecteur fort et influent.

Car, si Mekhitar, en tant que prédicateur de la doctrine Catholique, a été persécuté de la part des Patriarches et de ses compatriotes non-catholiques, il rencontra aussi de l'opposition de la part des Catholiques de rite latin et arménien aussi. Son œuvre était une nouveauté; il y avait même quelques différences dans sa manière de prêcher et de célébrer la liturgie. Cependant, les principales causes de cette opposition étaient des considérations humaines: la jalousie, l'incompréhension et d'autres motifs offraient un prétexte à le critiquer à une certaine catégorie de gens, qui étaient enclins à rendre l'œuvre de Mekhitar suspecte aux yeux du Saint-Siège.

Par là on comprend à quel degré ont été providentiels l'affection et la sympathie de Khatchadour pour Mekhitar et pour son œuvre.

Sans doute l'Abbé et sa Congrégation seraient justifiés devant le Saint-Siège, qui est un tribunal sage et impartial et, en même temps, une mère pleine de tendresse. Mais quel poids déterminant n'eut pas l'intervention de Khatchadour Vartapet, dont la renommée était si grande à Rome, et dont la parole, convaincante en elle-même, était puisée aux sentiments sincères de l'admiration et de l'estime les plus profondes et les plus légitimes, qu'il avait pour Mekhitar de Sébaste et pour son œuvre?

Etant donné que ces attaques se répétaient souvent, Khatchadour Vartapet aussi envoyait, à plusieurs reprises, des écrits de défense à Rome. Nous nous contentons de citer la plaidoirie qu'il fit parvenir, le 27 Février 1717, aux Cardinaux Membres de la S. Congrégation de la Propagande :

« J'ai appris que, dans le passé et actuellement encore, certains arméniens ont donné des renseignements défavorables sur Mekhitar et sur ses religieux, qui étaient jadis dans le Péloponèse et qui habitent maintenant à Venise, prétendant qu'ils sont ignorants et inaptes au ministère apostolique, et qu'ils ne professent pas la foi catholique dans son entière orthodoxie. Ces renseignements, au sujet des deux points aussi, sont complètement faux. Je connais, depuis environ vingt ans, cet Abbé, ses principaux missionnaires et religieux ».

« Lorsque je propageais la foi catholique à Constantinople, le susdit Abbé prêchait à Galata, et ses missionnaires en d'autres endroits ».

« L'Abbé Mekhitar était mon bras droit; ses missionnaires étaient, pour moi, des mains auxiliaires et des véhicules pour me transporter dans d'autres endroits. Tous étaient pour moi des compagnons et des instruments éminemment aptes à la propagation de la foi catholique romaine. Et nous avons propagé la foi catholique, et nous y avons ramené d'innombrables arméniens. Ses religieux, se soumettant avec patience aux travaux les plus durs, ont propagé la même foi catholique dans différentes régions. Ainsi donc, ils ont acquis, de fait aussi, le droit à l'apostolat dans notre nation, avec la grâce de Dieu... »

« Cette Congrégation a été fondée et a été approuvée par Vos Eminences pour la prédication de la foi catholique. Les religieux sont réunis dans ce but... Quoique je n'en sois pas membre, cette Congrégation, cependant, est la mienne; ces religieux sont les miens. C'est à cette intention qu'ils ont fondé, ici à Venise, un couvent, qu'ils veulent encore agrandir, afin de permettre — pendant que certains d'entre eux se consacrent à la prédication de la foi catholique, au risque même de leur vie — à leurs confrères de s'adonner, dans un lieu sûr, à l'étude et à l'enseignement et de recueillir des jeunes gens aptes à la vie religieuse, qui, instruits dans la langue arménienne et devenus parfaits religieux et ministres capables d'entreprendre des travaux apostoliques et connaissant bien l'arménien, iront, à leur tour, prêcher la foi catholique romaine à la Nation Arménienne ».

« Plusieurs se sont déjà ainsi réunis, ont reçu une très bonne instruction, sont devenus d'excellents religieux et ont répandu et répandent partout la bonne odeur des vertus. Ils sont, pour ceux qui les observent, des exemples de vertu; et ils apparaissent comme des vases élus et très odoriférants de fleurs religieuses. »

« Quant à la personne de l'Abbé Mekhitar, je dis qu'il a des aptitudes admirables. En peu de jours, durant sa jeunesse, il a appris chez moi la grammaire arménienne, en langue arménienne; j'ai rédigé pour lui, en arménien, toutes les sciences, ainsi que les mathématiques et la théologie. Il a appris parfaitement toutes les professions libérales, toutes les sciences et la théologie en entier... C'est un religieux doué d'une sainteté remarquable et d'une prudence admirable, une personne très modeste et très sage. Il a rédigé en arménien toutes les questions de la Somme d'Albert le Grand, pleine de sagesse et de science sacrée. Ce livre est déjà imprimé ici. Ceux, qui ont donné de faux renseignements, peuvent acheter ce livre, le lire et constater sa sagesse. A Méton, il a ouvert, dans son couvent, une école publique; et lui même, il a enseigné aux siens, en arménien, les sciences

naturelles et théologiques. Il est saint, et d'une intelligence supérieure, modèle de vertus, ornement de la nation arménienne, honneur de sa Congrégation, lumière et soleil pour ceux qui le connaissent, et qui ne nient pas la vérité. Ce n'est pas moi qui lui ai enseigné le latin et l'italien; il les a appris de lui-même... »

« Ceux qui sont portés à persécuter un religieux si célèbre doivent trembler sans doute: ils pèchent, évidemment, contre le Saint Esprit ».

Hâtons-nous de donner la conclusion, où Khatchadour Vartapet du fond de l'âme, fait appel au Saint-Siège en faveur de l'Abbé Mekhitar et le recommande chaleureusement :

« O très Sainte Eglise Romaine, vraie Epouse du Christ, toute puissante contre les portes de l'enfer, douée de la très spéciale assistance du Saint Esprit pour décréter, toujours invincible, refuge, citadelle et forteresse pour ceux qui souffrent une persécution implacable de la part des insensés; Toi, qui les as toujours protégés et sauvés des mains des persécuteurs, préservés contre la violence et consolés; Toi, qui, ayant l'esprit de ton Epoux, connais bien ceux qui en sont privés et ceux qui l'ont et cherchent sa gloire, et les distingue de ceux qui les simulent; je Te confie mes entrailles, mon cœur, mes yeux, et les très nobles œuvre et fruit de mes plus grands travaux de vingt ans, c'est-à-dire, l'Abbé Mekhitar et sa Congrégation. Cet homme est mon héritage; sa Congrégation est ma postérité. Toi-même, Tu es témoin que je suis ton fils et serviteur fidèle; l'Abbé Mekhitar aussi est ton fils et serviteur fidèle. En effet, il n'est pas autre chose que l'indigne apôtre Khatchadour Arakélean doublé; et sa Congrégation n'est pas autre chose que l'indigne Khatchadour Arakélean, heureusement multiplié et multiplicable par la grâce de Dieu. J'ai grand espoir que cette Congrégation conduira toute la Nation Arménienne à l'Eglise de Rome; car, si elle a des persécuteurs insensés, elle a aussi un merveilleux succès dans le domaine spirituel et dans la propagation de la foi ».

S'il est difficile de trouver des paroles plus chaudes et plus convaincantes pour la défense du grand Mekhitar de Sébaste, ils est encore plus difficile de trouver des expressions témoignant davantage à quel degré élevé Khatchadour Vartapet était lié, par une affection amicale, et même identifié, avec l'Abbé Mekhitar.

Si l'amitié est définie d'après Aristote et St. Thomas d'Aquin : la bienveillance mutuelle avec communication réciproque des biens; c'est bien le cas de demander, ici, quels étaient le fondement et la source de cette amitié, et quels biens se communiquaient ces deux âmes rayonnantes?

Le P. Torossean, biographe de la belle vie de son vénéré Père Fondateur, répond à cette question en ces termes : « Le lien d'amour et l'union, dans ces deux âmes, ne provenaient point du hasard ou d'un concours de circonstances, ni de la conformité des mœurs et des caractères; mais c'était seulement la ressemblance des vues religieuses et de la vie vertueuse, qui avait uni inséparablement

ces deux âmes, dont les caractères étaient, par ailleurs, différents» (p. 74).

Ressemblance donc de vues religieuses: c'est à dire, adhésion à la doctrine de l'Eglise Catholique Romaine, par une foi sincère, par un enseignement continu, par une conviction inébranlable que c'est là, en même temps, la manière la plus authentique de vivre de la vie de l'Eglise du Christ, une et universelle, que nos Saints Pères ont vue, glorifiée et transmise, comme dépôt, au peuple arménien.

On est porté non seulement à la compassion, mais même à une vraie révolte, quand on tombe, au sujet de l'Abbé Mekhitar, sur certaines déclarations qui tendent à présenter son attachement au Saint-Siège comme opportuniste, superficiel et hypocrite. Ceux qui s'expriment de la sorte, n'ont, hélas, point pénétré combien est limpide et lumineux le fond des âmes, qui craignent Dieu, et dont ne peut point s'emparer, même pas un instant, l'hypocrisie. Les Saints sont trop vertueux pour ne pas être sincères, surtout dans une question capitale et des plus importantes, telle que celle des vérités religieuses.

Pour ceux qui ont étudié la vie de l'Abbé Mekhitar, lu ses nombreuses publications surtout son *Commentaire de St Matthieu*, il est clair comme le soleil qu'il adhérerait très sincèrement et irrévocablement à la foi catholique.

Mais voilà qu'ici aussi Khatchadour Vartapet s'érige en défenseur. Se basant sur la plus intime connaissance et sur le voisinage, durant quarante ans, il confirme l'orthodoxie intrépide et la soumission de son saint ami au Siège Apostolique de Rome. Il pousse l'audace jusqu'à écrire: « De même qu'il n'est pas possible de douter que Khatchadour Arakélean soit le fils et le serviteur fidèle de l'Eglise Catholique, ainsi il n'est pas possible de douter également que Mekhitar soit le fils et le serviteur fidèle de l'Eglise Catholique ».

Khatchadour comme Mekhitar, éclairés par la foi catholique et en vivant cette foi, se sont révélés, dans la Nation Arménienne, prédicateurs et apôtres féconds et enthousiastes, et en même temps zélés pour la langue et pour la culture arméniennes, autant que les conditions de l'époque le permettaient. Khatchadour Vartapet mentionne avec plaisir qu'il a enseigné à Mekhitar la langue arménienne, qu'il a aussi composé une grammaire arménienne ainsi que d'autres travaux en arménien. D'autre part, bien notoire est le rôle joué par Mekhitar, soit personnellement soit par son Ordre, dans la prédication catholique, comme dans la langue et la culture arméniennes.

Khatchadour et Mekhitar, deux figures rayonnantes, apparues aux XVII et XVIII siècles, lorsque le peuple arménien traversait une période sombre religieusement et politiquement, ont inauguré une nouvelle ère. Mekhitar ne sera point jaloux si son ami est mis sur un même pied d'égalité avec lui.

Combien leur rayonnement aurait été plus fécond et plus étendu pour tout le peuple arménien, si l'ensemble de la Nation avait alors saisi la voie lumineuse qui s'ouvrait de l'Occident, dont notre Nation, aux époques de son progrès, s'est

sentie si proche et si amoureuse, tout en gardant intacte sa propre physionomie liturgique et culturelle.

L'histoire du peuple arménien, durant les deux derniers siècles, aurait été bien différente.

Aujourd'hui, alors que la Congrégation Mekhitariste, notre Hiérarchie et tous les Arméniens commémorent, avec gratitude, le deuxième centenaire de la *mort du grand Mekhitar de Sébaste, et que nous y lions le souvenir de son intime et fidèle ami, Khatchadour Vartapet, le peuple arménien vit de nouveau, hélas, une des plus sombres périodes de son histoire plusieurs fois séculaire.*

L'admirable exemple d'amour et de collaboration, que mettent devant nous, par leur vie, Mekhitar, père d'une famille religieuse, et Khatchadour, modèle du clergé séculier, reste le symbole et l'idéal de cet amour intime et de cette collaboration dévouée, dont notre clergé séculier et régulier s'inspireront toujours davantage pour encourager et élever, par la vraie religion, la vie vertueuse, le patriotisme éclairé et la vaste culture, tout le peuple arménien, que nous prions sans cesse le Seigneur de rendre de nouveau, comme le dit notre historiographe du Ve siècle Moïse de Khorène, «la plus noble des nations nordiques».

GRÉGOIRE PIERRE CARDINAL AGACIANIAN
Patriarche Arménien Catholique
de Cilicie